զարդ կարող է լինելու. փառաւոր է և մեծ վլա-
դիմիր փողոցն. ունի Փիեռ Հարուստ և ճոխ եկե-
ղեցիք՝ վերուստ 'ի վայր արծաթի խաչվալօք.
նշանաւոր են յայսմ մասին՝ քաղաքէն դուրս բեր-
դին մէջ Լաւրայի վանքի եկեղեցիք, այլ արուեստ
և ճարտարապետական ճաշակ կը պակասի սոցա։

Տներեր գետոյն եղերքը բարձրաբերձ նորաշէն
եկեղեցին՝ հաշակեալ յանուն Նախակոչ Աղբրէի
առաքելոյ, իւր գեղեցիկ և չքեղ իտալական ճար-
տարապետութեան արուեստիւն և նկարուք՝ եւ-
րոպացի տաճարացմէ վար չի մնար։ Հետաքննելի
են քաղաքէն դուրս գետնափոր դամբաններու մէջ
ամփոփուած սրբոց տապանք, ուր Ռուսաստանի
ամէն կողմէն ուխտաւորք կը յաճախեն. նշանա-
ւորք են այդ նշխարաց մէջ Ռուսաց Նեստոր և
Պիմէն ժամանակագրաց նշխարքն։ Ընդարձակ է
բարձրադիր լեհաց եկեղեցին, այլ ներսի կողմէն
անշուք, մանաւանդ աւազ խորանն, համեմատու-
թեամբ կամենիցի եկեղեցեաց։

Սեպտ. 9ին՝ ճեպընթացիկ չոգեկառօք ելայ 'ի
ճանապարհ դէպ յՕտեսսա։ Փիեռի և Քերսոնի
նահանգաց հայցուստ դաշտերն աշնանային տարա-
զուս մէջ էին. հունձք ժողոված, աստ և անդ յարդի
և խոտոյ մեծամեծ դէզեր, անտառք և պարտէզք
կիսամերկք, ծնացեալ կարմիր և դեղին տերևներն
կը սպասէին ցուրտ պախրցոյն՝ որ ազատէ զիրենք
երերուն վիճակէն։ Հասայ յՕտեսսա սեպտ. 11ին,
ուր քանի մ'օր մնալով, ամսոյն 17ին կանուխ
առաւօտը հասայ չոգենաւով, երբեմն հայութեամբ
նշանաւոր կաֆայ, այժմ Թէոդոսիա։ Ի վաղուց
փափաքելի ճանապարհորդութիւնս՝ ամսուան մէջ
կատարեցաւ, ցնորք և երևակայութիւնք աղետաւոր